ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

"29" դեկտեմբերի 2023 թվական N 17-Ն

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 12-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՎՃԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԻ ՆՄՈՒՇԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փոստային կապի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 45-րդ կետի և 10-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով.

1. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 2023 թվականի նոյեմբերի 24-ի «2024 թվականի փոստային վճարման պետական նշանների թեմաները սահմանելու և փոստային վճարման պետական նշանների անվանագները, տպաքանակն ու գործողության մեջ դնելու ժամկետները հաստատելու մասին» N 12-Ն հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) «5-րդ կետի 2-րդ ենթակետի՝ «Տպաքանակը (հատ)» սյունակի «10 000» թիվը փոխարինել «100 000» թվով:

2. Հաստատել փոստային վճարման պետական նշանի նմուշը՝ Մեծանուն հայեր. Հրանտ Վարդանյանի ծննդյան 75-ամյակ թեմային նվիրված «ՀՐԱՆՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ. HRANT VARDANYAN. 1949-2014» 1 նամականիշի, համաձայն հավելվածի:

3. Գործողության մեջ դնել՝ Մեծանուն հայեր. Հրանտ Վարդանյանի ծննդյան 75-ամյակ թեմային նվիրված «ՀՐԱՆՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ. HRANT VARDANYAN. 1949-2014» 1 նամականիշը, անվանագինը՝ 1000 դրամ, տպաքանակը՝ 100 000 հատ:

ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված_____
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2023 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 17-Ն հրամանի